

խափանել ջանայր» Մովսէս : Երբ չէր յաջողեր իրեն յորդորով եւ մեղմով ի զգաստութիւն բերել զանոնք, կը դիմէր բիրտ ոյժի եւ «հանել բռնութեամբ ի գեղօրէիցն եւ յափշտակել տայր բռնաւորացն զարտ եւ զայգիս նոցա եւ զամենայն կալուածս եւ գտունս նոցա յաւարի տայր առնել եւ զիւրեանքն բռնութեամբ բերէր ի կարգս խստակրօնս մուծանէր» կը գրէ Դարանաղցի (էջ 296—297) : Նոյն միտքը կրկնուած է ուրիշ խօսքերով (էջ 284—285) . «որ նա ժողովեաց զամենայն անառակ եպիսկոպոս անուանս ի վանաց եւ ի գեղջ բնակելոցն եւ արգելեաց ի նոցանէ զսուտ անուն եպիսկոպոս զոչն եւ բռնութեամբ կացոյց ի կարգս անապատաւորացն եւ սահման եղիր ըստ կանոնական սահմանին զի այլ մի՛ լիցին եպիսկոպոս, բայց յաթոռակալաց» :

Անշուշտ ուր անխորտակելի էր եղած գիմադրութիւնը, ապա կաթողիկոսական իշխանութեամբ կրցաւ յաղթահարել :

Ոչ միայն տգէտ եկեղեցականներու հանդէպ խիստ էր Մովսէս, այլ եւ թերուս եւ թափառական վարդապետներու հետ կ'ընթանար անաչառ : Իբրեւ օրինակ կը յիշեմ Կարապետ Վ. Զուղայեցին, որ աշակերտած էր Ազարիա վարդապետին եւ գաւազան ստացած Խարբերդցի Մկրտիչ վարդապետէն . սա կը գրէ իր անձի մասին . «Անկայ ի ձեռն քաջ սիտոր Մովսէս կաթողիկոսի . եւ մերկացուց